

Ե. ԱՏԱԼԻՒ

ԶԻՈՒՅՅ

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՐԱԳՐԱԿԱՆ
ԱՄՓԹՊՈ-ՀՈՎԱՐԴ ՆՅՈՒՍՊԵՑՊԵԲԱ
ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽՈԳՈՀ
Պ-Ն Պ-Ն ՀՈՅ ՀՈՎՈՐԴԻՒ ՀԵՏ

Պ Ե Տ Հ Ր Ա Տ

ՎԱՀԱԳՆԱԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939

05 FEB 2018

ՊՐԱԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՎՆԵՐԻ, ՄԻԱՅՆԻ

Ի. ՍՏԱԼԻՆ

ԶՐՈՒՅՑ
ԱՄԵՐԻԿԱՆ ԼՐԱԴՐԱԿԱՆ
«ՍԿՐԻԳՈ-ՀՈՎԱՐԴ ՆՅՈՒՍՊԵՅՊԵՐՍ»
ԾԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԱՀ
Պ.-Ն ՌՈՅ ՀՈՎԱՐԴԻ ՀԵՏ

Պ Ե Տ Հ Ր Ա Տ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939



11-28825 գր

И. СТАЛИН

БЕСЕДА С ПРЕДСЕДАТЕЛЕМ АМЕРИКАНСКОГО
ГАЗЕТНОГО ОБЪЕДИНЕНИЯ «СКРИПС-ГОВАРД
НЬЮСПЕЙПЕРС» Г-НОМ РОЙ ГОВАРДОМ

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939

ՀՈՎԱՐԴԻ. — Ի՞նչ հետևանքներ կունենան, Զեր կարծիքով,
Յաղոնիայի վերջին դեպքերը Հեռավոր Արևելքի դրության
համար:

ԱՏԱԼԻՆ. — Առաջմմ դժվար է ասել: Դրա համար շատ
քիչ նյութեր կան: Պատկերը բավականաչափ պարզ չէ:

ՀՈՎԱՐԴԻ. — Ի՞նչ դիրք կը ունի Խորհրդային Միությունն
այն գեղքում, յեթե Յաղոնիան սիրտ անի լուրջ հարձա-
կում գործելու Մոնղոլիայի ժողովրդական Հանրապետու-
թյան վրա:

ԱՏԱԼԻՆ. — Այն գեղքում, յեթե Յաղոնիան սիրտ անի
հարձակվելու Մոնղոլիայի ժողովրդական Հանրապետու-
թյան վրա, սպառնալով նրա անկախությանը, մենք հար-
կադրված կլինենք ոգնելու Մոնղոլիայի ժողովրդական
Հանրապետությանը: Արդեն կիտիկնովի տեղակալ Ստո-
մոնյակովը վերջնը այդ մասին հայտարարել և Մուլլայի
յաղոնական գեսապանին, մատնանշելով այն անփոփոխ բա-
րեկամական հարաբերությունները, վոր պահպանում և
ԽՍՀՄ-ն Մոնղոլիայի ժողովրդական Հանրապետության հետ
1921 թվականից: Մենք Մոնղոլիայի ժողովրդական Հան-
րապետությանը կողնենք այնպես, ինչպես ոգնեցինք նրան
1921 թվականին:

ՀՈՎԱՐԴԻ. — Այդպիսով, Յաղոնիայի կողմից Ուլան-Բա-
տորը գրավելու փորձը կհանգեցնի արդյոք գրական գոր-
ծողության ԽՍՀՄ-ի կողմից:

ԱՏԱԼԻՆ. — Այն, կհանգեցնի:

ՀՈՎԱՐԴԻ. — Արդյոք վերջին մի քանի որում յապոնա-
ցիները Մոնղոլիայի ժողովրդական Հանրապետության սահ-
մանագլխին ցուցաբերել են այնպիսի վորեն ակտիվություն,

վորը ԽՍՀՄ-ի կողմից հաւարվեր ազբեստիվ ակտիվություն:

ԱՏԱԼԻՆ.—Յապոնացիները, կարծեք, շարունակում են գորքեր կուտակել Մոնղոլիայի ժողովրդական Հանրապետության սահմանների մոտ, բայց սահմանային ընդհարումներ առաջ բերելու վորև նոր փորձ առայժմ չի նկատվում:

ՀՈՎԱՐԴԻ.՝ Խորհրդային Միությունը յերկյուղ է կրում, վոր Գերմանիան և Լեհաստանն իր գեմ ուղղված ազբեստիվ գիտավորություններ ունեն և նախապատրաստում են ուղամական մի համագործակցություն, վորը ակետք և ողնի այդ գիտավորությունների իրականացմանը: Մինչդեռ Լեհաստանը հայտարարում ե, թե չի ցանկանում ուսարերկրյա վորև դորքի թույլ տալ իր տերիտորիոն սղտագործել վորպես բազա՝ յերրորդ պետության դեմ ուղղված ոպերացիաների համար: Ի՞նչպես են պատկերացնում ԽՍՀՄ-ում Գերմանիայի հարձակումը: Վեր դերքերից, ի՞նչ ուղղությամբ կարող են գործել գերմանական գորքերը:

ԱՏԱԼԻՆ.՝ Պատմությունն ասում ե, վոր յերբ վորև պետություն ուզում ե պատերազմել մի այլ՝ նույնիսկ վոչ հարեան պետության հետ, ապա նա սկսում ե սահմաններ վորոնել վորոնց վրայով կարողանա հասնել այն պետության սահմաններին, վորի վրա նա ուզում ե հարձակվել: Սովորաբար ազբեստիվ պետությունն այդպիսի սահմաններ գտնում ե: Նա գտնում ե գրանք կամ ուժի միջոցով, ինչպես այդ տեղի ունեցավ 1914 թվականին, յերբ Գերմանիան Բելգիա ներխուժեց Ֆրանսիային հարվածելու համար, կամ նա «վարկով» ե վերցնում այդպիսի սահմանը, ինչպես այդ արեց Գերմանիան Լատվիայի նկատմամբ, առենք, 1918 թվականին, փորձելով նրա վրայով ճեղքել անցնել գետի լենինգրադ: Յեւ չգիտեմ, թե Գերմանիան հատկապես ինչ սահմաններ կարող ե հարմարեցնել իր նպատակներին, բայց կարծում եմ, վոր նրան «վարկով» սահման տրամադրելու սիրահարներ կարող են գտնվել:

ՀՈՎԱՐԴԻ.՝ Ամբողջ աշխարհում խոսում են պատերազմի մասին: Յեթե պատերազմն իրոք անխուսափելի յե, ապա, միտուր Ստալին, ձեր կարծիքով, յե՞րբ կտայթի այն:

ԱՏԱԼԻՆ.՝ Այդ անհնարին և նախագուշակելի: Պատերազմը կարող ե բոնկվել անսպասելիորեն: Այժմ պատերազմները չեն հայտարարվում: Նրանք ուղղակի սկսվում են: Բայց մյուս կողմից յես գտնում եմ, վոր խաղաղության բարեկամների դիրքերն ամբանում են: Խաղաղության բարեկամները կարող են աշխատել բացահայտորեն, նրանք հենվում են հասարակական կարծիքի հզորության վրա, նրանց արամագրության տակ են այնպիսի գործիքներ, ինչպես, օրինակ, Ազգերի լիգան: Դրանումն ե խաղաղության բարեկամների պլյուսը: Նրանց ուժն այն ե, վոր պատերազմի դեմ ուղղված նրանց գործունեյությունը հենվում ե ժողովրդական լայն մասսաների կամքի վրա: Ամբողջ աշխարհում չկա մի ժողովուրդ, վորը պատերազմ ցանկանալու: Ինչ վերաբերում ե խաղաղության թշնամիներին, ապա նրանք ստիպված են գաղտնի գործել:

Դրանումն ե խաղաղության թշնամիների մինուսը: Ասենք, չի բացառված, վոր հենց այդ պատճառով նրանք կարող են գիմել պատերազմական ավանտյուրայի, վորպես հուսահատության մի ակտի:

Խաղաղության բարեկամների գործի նորագույն հաջողություններից մեկն ե փոխադարձ ողնության ֆրանսիորհրդային պակտի վավերացումը Ֆրանսիայի գեղուտաների պալատի կողմից: Այդ պակտը վորոշ արգելք է հանդիսանում խաղաղության թշնամիների դեմ:

ՀՈՎԱՐԴԻ.՝ Եթե պատերազմ բռնկի, ապա նախ և առաջ աշխարհի վեր մասում կարող ե պայթել այն: Վերտեղ են ամենից շատ խոսցել պատերազմի ամլրոպային ամոլերը՝ Արևելքներ, թե Արևելքություն:

ԱՏԱԼԻՆ.՝ իմ կարծիքով, պատերազմի վատանգի յերկու ոջախ կա: Առաջին ոջախը գտնվում ե Հեռավոր Արևելքում, Յապոնիայի գոտում: Յես նկատի ունեմ յապոնական դինվո-

բականների բազմիցս արած սպառնալի հայտարարությունները՝ ուղղված մյուս պետությունների հասցեյին: Յերկրորդ ոջախը գտնվում է Գերմանիայի գոտում: Դժվար է ասել, թե վոր ոջախն և ամենից ավելի սպառնալից, բայց դրանք յերկումն ել գոյություն ունեն և զործում են: Պատերազմի վտանգի այդ յերկու հիմնական ոջախների հետ համեմատած իտալո-հաբեչական պատերազմը մի եպիզոդ է հանդիսանում: Առաջմ ամենամեծ ակտիվություն և ցուցաբերում վտանգի հեռավոր-արեկելյան ոջախը: Հնարավոր է, ուկայն, վոր վտանգի այդ կենարոնը Յեվրոպա փոխադրվի: Այդ մասին և խոսում թեկուղ վերջերս տեղի ունեցած այն զրոյցը, վոր տվել ե պ. Հիտլերը Փրանսական մի թերթի: Հիտլերն այդ զրոյցի մեջ կարծես փորձում և խաղաղասիրական բաներ առել, բայց իր այս «խաղաղասիրության» վրա նա այնքան շատ սպառնալիքներ և ավելացնում Ֆրանսիայի և Խորհրդային Միության գեմ, վոր «խաղաղասիրությունից» վոչինչ չի մնում: Ինչպես տեսնում եք, նույնիսկ այն ժամանակ, յերբ պ. Հիտլերն ուղղում է խաղաղության մասին խոսել նա չի կարողանում կառավարվել առանց սպառնաւիքների: Դա սիմպոմ է:

ՀՈՎԱՐԴԻ. — Ձեր կարծիքով վորն և արդի պատերազմական վտանգի հիմնական պատճառը:

ՍՏԱԼԻՆ. — Կապիտալիզմը:

ՀՈՎԱՐԴԻ. — Կապիտալիզմի հատկապես վոր արտահայտումները:

ՍՏԱԼԻՆ. — Նրա իմպերիալիստական հափշտակողական արտահայտումները:

Դուք հիշում եք, թէ ինչպես ծագեց առաջին համաշխարհային պատերազմը: Նա ծագեց աշխարհը վերաբաժանելու ցանկությունից: Այժմ ել առտառը նույնն է: Կան կապիտալիստական պետություններ, վորոնք իրենց զրկված են համարում ազդեցության վոլորտների, տերիտորիաների, հումքի աղբյուրների, շուկաների և այլնի նախորդ վերաբաժանման ժամանակ և վարոնք կուգեյին կրկին վերա-

բաժանել դրանք՝ հոգուա իրենց: Կապիտալիզմն իր իմպերիալիստական փուլում այնպիսի մի սիստեմ է, վորը պատերազմն որինական մեթոդ է համարում միջազգային հակասությունները լուծելու համար, որինական մեթոդ՝ յեթե վոչ իրավաբանորեն, ապա ըստ եյության:

ՀՈՎԱՐԴԻ. — Արդյոք Դուք չեք գտնում, վոր կապիտալիստական յերկրներում կարող է հիմնավորված յերկուուղ գոյություն ունենալ, թէ՝ չվենի Խորհրդային Միությունը վորոշի ուժով մյուս ժողովուրդների վզին փաթաթել իր քաղաքական թերթիաները:

ՍՏԱԼԻՆ. — Այդպիսի յերկուողների համար վոչ մի հիմք չկա: Յեթե Դուք կարծում եք, վոր խորհրդային մարդիկ ցանկանում են իրենք և այն ել ուժով փոխել շրջապատող պետությունների գեմքը, ապա Դուք չարաչար մոլորվում եք: Խորհրդային մարդիկ, ինարկե, ցանկանում են, վոր շրջապատող պետությունների գեմքը փոխվի, բայց դա հենց իրենց շրջապատող պետությունների գործն է: Յես չեմ տեսնում, թէ ինչ վտանգ կարող են տեսնել շրջապատող պետությունները խորհրդային մարդկանց գաղափարներում, յեթե այդ պետություններն իցոք ամուր են նպատած թամբին:

ՀՈՎԱՐԴԻ. — Արդյոք Ձեր այդ հայտարարությունը նշանակմամբ է, վոր Խորհրդային Միությունը վորևե չափով թողել և համաշխարհային հեղափոխություն առաջ բերելու իր պլանն ու դիտավորությունները:

ՍՏԱԼԻՆ. — Մենք այդպիսի պլաններ ու դիտավորություններ յերբեք չենք ունեցել:

ՀՈՎԱՐԴԻ. — Ինձ, միատը Ստալին, թվում ե, վոր ամբողջ աշխարհում յերկար ժամանակվա ընթացքում այլ տպագորություն և ստեղծվել:

ՍՏԱԼԻՆ. — Դա յես համարում եմ թյուրիմացության արդյունք:

ՀՈՎԱՐԴԻ. — Տրագիկական թյուրիմացություն:

ՍՏԱԼԻՆ. — Վհչ, կոմիկական: Կամ, առենք, արագիկոմիկական:

Դիտեք ինչ, մենք, մարքովատներս, գոնում ենք, վոր
հեղափոխություն տեղի կունենա նաև մյուս յերկրներում:
Բայց նա տեղի կունենա միմիայն այն ժամանակ, յերբ այդ
հնարավոր ու հարկավոր կամարեն այդ յերկրների հեղա-
փոխականները: Հեղափոխության արտահանումը՝ դա ան-
հեթեթություն ե: Յուրաքանչյուր յերկիր, յեթե նա ուղե-
նա այդ, ինքը կատարի իր հեղափոխությունը, իսկ յեթե
չուղենա, ապա հեղափոխություն չի լինի: Առա, որինակ,
մեր յերկիրն ուղեց հեղափոխություն կատարել ու կատա-
րեց այն, և այժմ մենք կառուցում ենք նոր անդասակարդ
հասարակություն: Բայց պնդել թե մենք ուղում ենք, իբ-
րև թե, հեղափոխություն կատարել մյուս յերկրներում, մի-
ջամտեղով նրանց կյանքին,—այդ նշանակում ե ասել այն,
ինչ վոր չկա և ինչ վոր մենք յերբեք չենք քարոզել:

ՀԱՎԱՐԴԻ.—ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև դիմանագիտական
հարաբերություններ հաստատվելու պահին նախագահ Ռուզա-
վելտը և պարոն Լիտվինովը նույնական նոտաներ փոխա-
նակեցին պրոպագանդայի հարցի շուրջը: Պարոն Լիտվինո-
վի կողմից նախագահ Ռուզվելտին ուղղված նամակի չոր-
րորդ կտոռում առված ե, վոր խորհրդային կառավարությու-
նը պարտավորվում է «Թույլ չտալ վոր իր տերիտորիայում
կազմվեն կամ գտնվեն վորեցե կազմակերպություններ կամ
խմբեր և իր տերիտորիայում նախազգուշական միջացներ
ձեռք առնել վորեցե այնպիսի կազմակերպությունների,
կամ խմբերի, կամ ներկայացուցիչների, կամ վորեն այն-
պիսի կազմակերպությունների կամ խմբերի պաշտոնատար
անձերի գործունեյության դեմ, վորոնց նողատակն և ամ-
բողջ Միացյալ Նահանգներում կամ նրանց տերիտորիանե-
րի ու տիրապետությունների մի մասում տապալել, կամ
նախապատրաստել տապալումը, կամ ուժով փոխել քաղա-
քական կամ սոցիալական կարգերը: Յես ինդրում եմ Զեզ,
միասըր Ստալին, բացատրեք ինձ, թե ինչո՞ւ պարոն Լիտ-
վինով ստորագրել ե այդ նամակը, յեթե այդ կետի թե-
լադրած պարտավորությունների կատարումն անհամատե-

ղելի յե Խորհրդային Միության ցանկությունների հետ,
կամ նրա իշխանությունից դուրս ե:

ԱՏԱԼԻՆ.—Զեր կողմից մեջքերված կետի պարտավո-
րությունների կատարումը մեր ձեռքումն ե, մենք այդ պար-
տավորությունները կատարել ենք և կատարելու յենք:

Մեր սահմանադրության համաձայն՝ քաղաքական հմի-
գրանտներն իրավունք ունեն ապրելու մեր տերիտորիա-
յում: Մենք նրանց ապառատանի իրավունք ենք տալիս
ձիւտ այնպես, ինչպես և ԱՄՆ-ն ապաստանի իրավունք են
տալիս քաղաքական եմիգրանտներին: Միանգամայն ակնե-
րե ե, վոր յերբ Լիտվինովի ստորագրում եր այդ նամակը,
նա յենում եր այն բանից, վոր նրա պարունակած պար-
տավորությունները յերկողմ բնույթ ունեն: Դուք, միա-
տեղ Հովարդ, գտնում եք արդյոք, վոր Ռուզվելտ—Լիտվի-
նովի համաձայնությանը հակասում ե, յեթե ԱՄՆ-ի տերի-
տորիայում գտնվում են ուստի սպիտակ-գվարդիական հմի-
գրանտներ, վորոնք Խորհուրդների գեմ և հոգուտ կավիտա-
լիզմի պրոպագանդա յին մղում, վորոնք վայելում են ամե-
րիկյան քաղաքացիների նյութական աջակցությունը և յեր-
բեմն հանդիսանում են տեսորիաների եմբեր: Անտարա-
կույս, այդ եմիգրանտներն ոգտվում են ԱՄՆ-ումն ել զոյու-
թյուն ունեցող ապաստանի իրավունքից: Ինչ վերաբերում
ե մեզ, ապա մենք մեր տերիտորիայում վոչ մի տեսորիատ
չեինք հանդուրժի՝ ուժ դեմ ել նյութեր նա իր հանցա-
գործությունները: Հստ յերկութիւն՝ ԱՄՆ-ում ապաստանի
իրավունքն ավելի լայնարարութեն և մեկնաբանվում, քան
մեր յերկրում: Վոչինչ, մենք արտունջ չունենք:

Դուք թերեւ ինձ կառարկեք, վոր մենք համակրում
ենք մեր տերիտորիայում գտնվող քաղաքական այդ եմի-
գրանտներին: Բայց միթե չկան սպիտակ-գվարդիական
եմիգրանտներին համակրող ամերիկյան քաղաքացիներ,
այն եմիգրանտներին, վորոնք պրոպագանդա յին մղում
հոգուտ կավիտալիզմի և ընդդեմ Խորհուրդների: Հետևար
ինչի՞ մասին ե խոսքը: Խոսքն այն մասին ե, վոր չովնենք

այդ մարդկանց, չփինանսավորենք նրանց գործունեյությունը: Խոռքն այն մասին ե, վոր յերկու յերկրների պաշտոնատար անձերը չխառնվեն մյուս յերկրի ներքին գործերին: Մեր պաշտոնատար անձերն ազնվարար կատարում են այդ պարտավորությունը: Յեթե նրանցից վորևե մեկը մեղանչել ե, թող ասեն մեզ:

Յեթե շատ հեռու գնանք և պահանջնք բոլոր սպիտակովարդիական հմիգրանտներին արտաքսել ԱՄՆ-ից, ապա այդ վոտնանձություն կլիներ ապաստանի այն իրավունքի դեմ, վոր հոչակված ե թե ԱՄՆ-ում և թե ԽՍՀՄ-ում: Այստեղ պետք ե ըստունել պահանջների ու հակապահանջների վորոշ բանական սահման: Լիտվինովը նախագահ Ռուզվելտին ուղղած իր նամակն ստորագրել ե վոչ վորպես մասնավոր անձ, այլ վորպես պետության ներկայացուցիչ, ճիշտ այնպես, ինչպես այդ արել ե նաև նախագահ Ռուզվելտը: Նրանց համաձայնությունը հանդիսանում է յերկու պետությունների համաձայնություն: Ստորագրելով այդ համաձայնություն՝ թե Լիտվինովը և թե նախագահ Ռուզվելտը, վորպես յերկու պետությունների ներկայացուցիչներ, նկատի ունեցին իրենց պետության գործակալների գործունեյությունը, վորոնք չպետք ե խառնվեն և չեն խառնվելու մյուս կողմի ներքին գործերին: Յերկու պետություններում հոչակված ապաստանի իրավունքը չեր կարող շրջափել այդ համաձայնությամբ: Այդ շրջանակներում պետք ե մեկնաբանել Ռուզվելտ—Լիտվինովի համաձայնությունը, վորպես յերկու պետությունների ներկայացուցիչների համաձայնություն:

ՀՈՎԱՐԴ.—Բայց միթե ամերիկյան պատվիրակներ Բրոուդերը և Դարսին կոմունիստական ինտերնացիոնալի անցյալ տարի Մոսկվայում կայացած VII կոնգրեսում կոչ չեցին անում բռնի կերպով տապակելու ամերիկյան կառավարությունը:

ՍՏԱԼԻՆ.—Խոռքն ամերիկյան վոր ընկերներ Բրոուդերի և Դարսի ճառաքը չեմ հիշում, յես նույնիսկ չեմ հիշում,

թե ինչի մասին են խոսել նրանք: Կարող ե պատահել, վոր նրանք այդպիսի մի բան ասած լինեն: Բայց խորհրդային մարդկել չեն, վոր ստեղծել են ամերիկյան կոմունիստական կուսակցությունը: Այն ստեղծել են ամերիկացիները: Նա ԱՄՆ-ում գոյություն ունի լեզու կերպով, նա իր թեկնածուներն ե առաջարում ընտրությունների ժամանակ, ներառյալ նաև նախագահական ընտրությունները: Յեթե ընկերներ Բրոուդերը և Դարսին Սոսկվայում ճառով հանդես են յեկել մի անգամ, ապա իրենց տանը ԱՄՆ-ում նրանք այդպիսի և նույնիսկ հավանորեն ավելի վճռական ճառերով հանդես յեկած կլինեն հարյուրավոր անդամ: Զե վոր ամերիկյան կոմունիստները հնարավորություն ունեն ազատորեն քարոզելու իրենց գաղափարները: Միանգամայն սխալ կլիներ խորհրդային կառավարությանը պատասխանառու համարել ամերիկյան կոմունիստների գործունեյության համար:

ՀՈՎԱՐԴ.—Այս, բայց այս անգամ խոռքը վերաբերում է ամերիկյան կոմունիստների այն գործունեյությանը, վոր տեղի քե ունեցել խորհրդային տերիտորիայում՝ ի խախտումն Ռուզվելտ—Լիտվինովի համաձայնության չորրորդ կետի:

ՍՏԱԼԻՆ.—Ի՞նչ ե ներկայացնում իրենից կոմունիստական կուսակցության գործունեյությունը, ինչնո՞ւ կարող է արտահայտվել այն: Այդ գործունեյությունը սովորաբար կաւյանում ե բանվորական մասսաներին կազմակերպելու մեջ, միտինգներ, ցույցեր, գործադուներ և այլն կազմակերպելու մեջ: Միանգամայն հասկանալի յե, վոր ամերիկյան կոմունիստներն այդ ամենը չեն կարող կատարել խորհրդային տերիտորիայում: Մեզանում ԽՍՀՄ-ում ամերիկյան բանվորներ չկան:

ՀՈՎԱՐԴ.—Կարող եմ արդյոք Ձեր հայտարարությունը հատկանալ այնպես, թե կարելի յե գտնել փոխադարձ պարագարությունների այնպիսի մեկնաբանություն, վորով

մեր յերկու յերկրների միջն բարի հարաբերությունները պահպանվեն ու շարունակվեն:

ՍՏԱԼԻՆ.—Այս, անպայման:

ՀՈՎԱՐԴԻՆ.—Դուք ընդունում եք, վոր ԽՍՀՄ-ում կոմունիստական հասարակություն դեռ չի կառուցված: Կառուցված և պետական սոցիալիզմ: Ֆաշիզմը իտալիայում և նացիոնալ-սոցիալիզմը Գերմանիայում պնդում են, թե իրենք նման արդյունքների յեն հասել: Արդյոք հիշյալ բոլոր պետությունների համար ընդհանուր գիծ չե անձի ազտության խախտումը և այլ զրկանքներ՝ ի շահ (Յ ինտեր-էաշ) պետության:

ՍՏԱԼԻՆ.—«Պետական սոցիալիզմ» արտահայտությունը ճիշտ չե: Այդ տերմինով շատերը հասկանում են այնպիսի կարգ, վորի ժամանակ հարստությունների վորոշ, յերբեմն բավական նշանակելի մասն անցնում ե պետության ձեռքը կամ նրա վերահսկողության տակ, մինչդեռ մեծ մասամբ դորժարանների, ֆարբիկաների և հոդի սեփականությունը մնում և մասնավոր անձերի ձեռքին: Շատերն այսպիս են հառկանում «պետական սոցիալիզմը»: Յերբեմն այդ տերմինի տակ թագնված ե լինում այնպիսի մի կարգ, վորի ժամանակ կապիտալիստական պետությունը, պատերազմ նոխապատրաստելու կամ մղելու համար, իր վրա յե վերցնում վորոշ թվով մասնավոր ձեռնարկություններ պահելը: Հասարակությունը, վորը մենք կառուցել ենք, վոչ մի կերպ չի կարելի «պետական սոցիալիզմ» անվանել: Մեր խորհրդային հասարակությունը սոցիալիստական և այն պատճառով, վոր ֆարբիկաների, գործարանների, հողի, բանկերի և տրանսպորտի միջոցների մասնավոր սեփականությունը մեղանում վերացված ե և փոխարինված ե հանրային սեփականությամբ: Հասարակական այն կազմակերպությունը, վոր ստեղծել ենք մենք, կարելի յե անվանել խորհրդային, սոցիալիստական, գեռ վոչ լիովին ավարտված կազմակերպություն, բայց իր արմատով հասարակության սոցիալիստական կազմակերպություն: Այդ հասարակության հիմքն

ե հանդիսանում հանրային սեփականությունը: պետական, այսինքն՝ համաժողովրդական, ինչպես նաև կոոպերատիվ-կոլտնտեսային սեփականությունը: Վեչ իտալական ֆաշիզմը, վոչ ել գերմանական նացիոնալ-«սոցիալիզմը» վոչ մի ընդհանուր բան չունեն այդպիսի հասարակության հետ: Նախ և առաջ այն սպատնառով, վոր այնտեղ ֆարբիկաների ու գործարանների, հողի, բանկերի, տրանսպորտի և այնի մասնավոր սեփականությունն անձեռնմիելի յե նացել, ուստի և կապիտալիզմը Գերմանիայում և Իտալիայում մնում ե ամբողջապես իր ուժի մեջ:

Այս, Դուք իրավացի յեք, մենք գեռ կոմունիստական հասարակություն չենք կառուցել: Այսքան ել հեշտ չե այդպիսի հասարակություն կառուցելը: Սոցիալիստական և կոմունիստական հասարակության տարրերությունը Ձեզ անշշուշտ հայտնի յե: Սոցիալիստական հասարակության մեջ զենամ գոյություն ունի գույքային վորոշ անհավասարություն: Բայց սոցիալիստական հասարակության մեջ արդեն գործազրկություն չկա, արդեն շահագործում չկա, արդեն ազգությունների ձնշում չկա: Սոցիալիստական հասարակության մեջ յուրաքանչյուր վոր պարտավոր և աշխատել, թեպետ և իր աշխատանքի համար դեռ իր պահանջմունքներին համակերպ չի ստանում, այլ ներդրած աշխատանքի քանակին ու վորակին համակերպ: Ուստի և գեռ գոյություն ունի աշխատավարձը, այն ել անհավասար, դիմերենցված աշխատավարձը: Միայն այն ժամանակ, յերբ հաջողվի ստեղծել այնպիսի հանրակարգ, վոր մարդիկ իրենց աշխատանքի համար հասարակությունից ստանան վոչ թե բառ աշխատանքի քանակի ու վորակի, այլ համակերպ իրենց պահանջմունքներին, կարելի կիմնի ասել, թե մենք կառուցել ենք կոմունիստական հասարակություն:

Դուք ասում եք, թե մեր սոցիալիստական հասարակությունը կառուցելու համար մենք զոհաբերել ենք անձնական ազատությունը և զրկանքներ ենք կրել: Ձեր հարցում նկատված ե այն միտքը, թե սոցիալիստական

հասարակությունը ժխտում ե անձնական ազատությունը: Այդ սխալ ե: Ինարկե, վորևե նոր բան կառուցելու համար կարիք ե լինում խնայողություն անել, միջոցներ կուտակել ժամանակավորապես կրծատել իր պահանջմունքները և փոխ վերցնել ուրիշներից: Յեթե ուզում ես նոր տուն կառուցել, ապա փող ես կուտակում, ժամանակավորապես կրծատում ես քո պահանջմունքները, այլապես՝ տունը կարող ես և չկառուցել: Դա ավելի ես իրավացի յե, յերբ խոսքը վերաբերում է մարդկային ամբողջ նոր հասարակություն կառուցելուն: Հարկ եր լինում ժամանակավորապես կրծատել միքանի պահանջմունքներ, համապատասխան միջոցներ կուտակել և լարել ուժերը: Մենք հենց այլպես ել վարեցինք և կառուցեցինք սոցիալիստական հասարակություն:

Բայց այդ հասարակությունը մենք կառուցեցինք վոչ թե անձնական ազատությունը ճմլելու համար, այլ նրա համար, վոր մարդկային անձնավորությունն իրոք ազատ զգա իրեն: Այդ հասարակությունը մենք կառուցեցինք անձնական իրական ազատության, առանց չակերտների ազատության համար: Յեն դժվարանում եմ պատկերացնել, թե անձնական ինչպիսի «ազատություն» կարող ե ունենալ այն գործազրկը, վորը սոված ման ե գալիս և իր աշխատանքի կերպումը չի գտնում: Իսկական ազատություն կա միայն այնանդ, վորտեղ վոչնչացված և շահագործումը, վորտեղ չկա մարդկանցից վոմանց ճնշվելը մյուսների կողմց, վորտեղ չկա գործազրկություն, և աղքատություն, վորտեղ մարդ չի գտնում այն բանի համար, թե վաղը կարող է կորցնել աշխատանքը, բնակարանը, հացը: Միմիայն այդպիսի հասարակության մեջ հնարավոր է խսկական և վոչ թե թղթե, անձնական ու ամեն տեսակ ազատություն:

ՀՈՎԱՄԹ.—Դուք համատեղելի գտնում եք արդյոք ամերիկյան գեմոկրատիայի և խորհրդային սիստեմի զուգահեռ դարձացումը:

ԱՏԱԼԻՆ.—Ամերիկյան դեմոկրատիան և խորհրդային սիստեմը կարող են խաղաղ կերպով դոյակցել և մրցակցել:

Բայց մեկը չի կարող զարգանալով վերածվել մյուսին: Խորհրդային սիստեմը չի վերածի ամերիկյան գեմոկրատիայի և ընդհակառակը: Մենք կարող ենք խաղաղ կերպով դոյակցել յեթե ամեն տեսակ մանրունքի առթիվ բժանինդրություն չանենք իրար նկատմամբ:

ՀՈՎԱՄԹ.—ԽՍՀՄ-ում մշակվում ե նոր սահմանադրություն, վորը նախատեսում է ընտրական նոր սիստեմ: Ի՞նչ չափով կարող ե այդ նոր սիստեմը փոխել ԽՍՀՄ-ում գոյություն ունեցող զրությունը, վորչափ վոր ընտրություններին առաջվա նման հանդիս ե գալու միայն մի կուտակություն:

ԱՏԱԼԻՆ.—Մեր նոր սահմանադրությունը մենք կը նկունենք յերկի այս տարվա վերջինին: Սահմանադրություն մշակող հանձնաժողովն աշխատում է և շուտով պետք ե ավարտի իր աշխատանքը: Ինչպես արդեն հայտարարվել ե, նոր սահմանադրությամբ՝ ընտրությունները լինելու յեն համընդհանուր (ԵԱԾԿ), հավասար, ուղղակի և գաղանի: Չեզ շփոթեցնում ե, վոր այդ ընտրություններին հանգեստ ե գալու միայն մի կուտակություն: Դուք չեք տեսնում, թե ընտրական ինչպիսի պայքար կարող է լինել այդպիսամաններում: Ակներեն ե, ընտրություններին ընտրական ցուցակներ առաջադրելու յե վոհ միայն կոմունիստական կուտակությունը, այլև ամեն տեսակ հասարակական անկուտական կազմակերպությունները: Իսկ այդպիսիները մեղանում հարցուրավորներ են: Մեզանում չկան մեկը մյուս հակագրվող կուտակությունները, ճիշտ այնպես, ինչպես չկան մեղանում կավիտալիստների և նրանց կողմց շահագործվող բանվորների իրար դիմակայող (պրոտիվօւթօրապի): Կառակարգերը: Մեր հասարակությունը բազկացած ե բացառապես քաղաքի ու զյուղի ազատ աշխատավորներից բանվորներից, զյուղացիներից, ինտելիգենցիայից: Այդ խավերից յուրաքանչյուրը կարող է ունենալ իր հատուկ շահերը և արտացոլել գրանք գոյություն ունեցող բազմաթիվ հասարակական կազմակերպությունների միջոցով: Բայց քանի վոր գառակարգեր չկան, քանի վոր գառակար-

գերի միջև սահմանները չնշվում են, քանի վոր սոցիալիստական հասարակության տարբեր խավերի միջև մնում է վորոշ բայց վոչ արմատական տարբերություն, չի կարող սննդաբար հող լինել իրար դեմ պայքարող կուսակցություններ ստեղծելու համար։ Այստեղ չկան միքանի դասակարգեր չեն կարող միքանի կուսակցություններ լինել վորովհետև կուսակցությունը դասակարգի մի մասն է։

Նացիոնալ-Հառցիալիզմի» պայմաններում և գոյություն ունի միայն մի կուսակցություն: Բայց ֆաշիստական միակուսակցական այդ սիստեմից վոչինչ չի գուրս գա: Բանն այն է, վոր Գերմանիայում մնացել ե կապիտալիզմը, մնացել են դասակարգերը, դպրակարգային սպայքարը, վարը, միենույն ե, դուրս կպութկա, այդ թվում նուև ներհակ դասակարգեր ներկայացնող կուսակցությունների պայքարի բնագավառում, այնպես, ինչպես պութկաց, ասենք, Խաղաղիայում: Խտալիայում նույնպես գոյություն ունի միայն մի ֆաշիստական կուսակցություն, բայց նույն պատճառությունը այնտեղ ևս վոչինչ չի գուրս գա գրանից:

Ինչու մեր ընտրությունները համբնդանուր են լինելու։ Այս պատճառով, վոր բոլոր քաղաքացիները, բացի գտարանով ընտրական իրավունքից զրկվածներից, ընտրելու և ընտրվելու իրավունք են ունենալու։

Ինչո՞ւ մեր ընտրությունները հավասար են լինելու վորովհետև վհա գույքային հարաբերության մեջ յեղած տարբերությունը (վորը մասնակի զեռ գոյություն ունի), վհա ռասային ու ազգային պատկանելությունը վհա մի արտօնություն կամ վնաս չեն տալու: Կանայք վայելելու յեն ակտիվ ու պատսիվ ընտրական իրավունք՝ տղամարդկանց հետ հավասար իրավունքներով: Մեր ընտրություններն իրական հավասար ընտրություններ են լինելու

Ինչու գաղտնիք։ Այն իսկ պատճառով, վոր մենք ուզում
ենք խորհրդային մարդկանց լիակատար ազատություն
տալ։ Քվեարկելու հոգուա նրանց, ում նրանք ուզում են
ընտրել, ում նրանք վատահում են իրենց շահերի ազահո-
վումը։

ինչքեւ ուղղակի: Վարովիկեան ներկայացուցչական բոլոր
հիմնարկների համար, ընդհուպ մինչև գերազույն որդաննե-
րի համար, անմիջականորեն տեղերում կսատարված ընտ-
րություններն ավելի լավ են ապահովում մեր անծայրածիր
յերկրի աշխատավորության շահերը:

Ձեզ թվում ե, թե ընտրական պայքար չի լինելու:
Բայց նա կլինի, և յես նախատեսում եմ ընտրական խիստ
աշխույժ պայքար: Մեղանում քիչ չեն վատ աշխատող հիմ-
նարկներ: Պատահում ե, վոր իշխանության այս կամ այն
տեղական որդանը չի կարողանում բավարարել քաղաքի և
գյուղի: աշխատավորության այս կամ այն բազմակող-
մանի ու հարաձուն պահանջներից այս կամ այն պահանջ-
ները: Լավ դպրոց կառուցել ես գու արդյոք, թե չես կա-
ռուցել: Բնակարանային պայմանները բարելավի՞լ ես
արդյոք գու: Դու բյուրոկրատ չեմ արդյոք: Ոգնել ես ար-
դյուք գու մեր աշխատանքն ավելի եֆեկտավոր, մեր կյանքն
ավելի կուլտուրական դարձնելուն: Սրանք են լինելու այն
չափանիշները, վերանցով մոտենալու յեն միլիոնավոր ընտ-
րողները թեկնածուներին, գեն շարտերով անսպետներին,
չնչելով նրանց՝ ցուցակներից, առաջ քաշելով լավագույն-
ներին և առաջարելով նրանց թեկնածությունը: Այս, ընտ-
րական պայքարն աշխույժ ե լինելու, նա ընթանալու յե-
քաղմաթիվ ամենասուր հարցերի շուրջը, գլխավորապես ժո-
ղովրդի համար առաջնակարդ նշանակություն ունեցող գործ-
նական հարցերի շուրջը: Մեր նոր ընտրական սխատեմը ձիգ
կտա բոլոր հիմնարկներին ու կազմակերպություններին,
համարկադրի նրանց բարեկամի իրենց աշխատանքը: Համ-
ընդհանուր, հավասար, ուղղակի ու գաղտնի ընտրությունները
ԽՍՀՄ-ում մի խարազան են լինելու բնակչության
ձևորում՝ իշխանության վատ աշխատող որդանների դեմ: Մեր
նոր խորհրդային սահմանադրությունը, իմ կարծիքով, ամե-
նադիմուրատական սահմանադրությունն և լինելու աշխար-
հում գոյություն ունեցող բոլոր սահմանադրություններից

Գրի առաջի Կ. Աւագինի:



Հայերեն թարգմանության խմբադիր Դ. Հարուբյան
Տեխ. խմբագիր Հ. Մանվելյան
Սրբադցիչ Հ. Մանվելյան

Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արայիսի

Գլավիտի լիազոր հա 8-1694, հրատ. հ 676

Պատմիք հ 83, տիբած 5000

Քղթի չափոր 39 <83^{1/2} (51.200 տպ. նիշ 1 տպ. մամուռած)

1 տպ. մամուռ, 1/2 թերթ թուղթ.

Հանձնված ե արտադրության 20/IV 1939 թ.

Առորագրված և սպազրկու 14 V 1939 թ.

Քինը 20 կ.

Պահպատ—Բաղաքական գրականության հրատարակչության տպարան
Երևան, Ալլոհիկյան հ 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0928239

1 ИЮН 1939

ЧРЫС 20 9.

278

11

28825

75

И. СТАЛИН

БЕСЕДА С ПРЕДСЕДАТЕЛЕМ АМЕРИКАНСКОГО
ГАЗЕТНОГО ОБЪЕДИНЕНИЯ «СКРИПС-ГОВАРД
НЬЮСПЛЯЙНС» Г.Н. РОЙ ГОВАРДОМ

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939